ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՃՈՊԱՆՈՒՂՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ,ՆՈՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՋՀ-ՃՇՀ-ԳՀԱՇՁԲ-21/8

ք. Ջերմուկ «02» սեպտեմբերի 2021թ.

Ջերմուկի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանի, որը գործում է_____ համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՈՎՋԱՎ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ջերմուկ քաղաքի ճոպանուղու շինությունների հիմնանորոգման,նորերի կառուցման աշխատանքները(այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների համապատասխան տեխնիկական հսկողության ծառայության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 01.11.2021թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Աշխատանքները սկսելուց 5 օրացուցային օր առաջ դիմել Պատվիրատուին շինարարական թույլտվություն ստանալու համար:

3.4.13 Հատուցել աշխատանքների ընթացքում առաջացած կոմունալ ծախսերը:

3.4.14 Շինարարական աշխատանքների ավարտից հետո ապահովել կապալի օբյեկտի մաքրությունը:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **20** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 28965383 (քսանութ միլիոն ինը հարյուր վաթսունհինգ հազար երեք հարյուր ութսուներեք) ՀՀ դրամ, որից 4827564(չորս միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր՝առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցվա ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիր ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օ Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցո Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունե հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույ պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստան Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ջերմուկի համայնքապետարան	«ՀՈՎԶԱՎ» ՍՊԸ
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8	ք.Ջերմուկ.Շահումյան 11ա
Կենտրոնական գանձապետարան	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900362052012	Հ/Հ 2478000561910010
ՀՎՀՀ 08913735	ՀՎՀՀ 08909995
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան	Տնօրեն՝ Ա.Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրության չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«02» սեպտեմբերի 2021թ. կնքված
N ՋՀ-ՃՇՀ-ԳՀԱՇՁԲ-21/8 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՃՈՊԱՆՈՒՂՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՆՈՐԵՐԻ, ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը դրամ/	Ընդամենը տոկոսներով
1	2	3	4	5	6
1. ՍՊԱՍԱՍՐԱՀԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ					
	Քանդման աշխատանքներ				
1	3-րդ կարգի բնւսհողի մշակում ձեռքով	մ³	4,670	2,500	11,6750
2	Ց/ավազե սվաղի քանդում պատերից	մ²	55,30	0,600	33,1800
3	Ներսի մակերևույթների մաքրում/մամուռից/	մ²	62,750	1,600	100,4000
4	Մ/պլաստե վերնափեղկով դռների ապամոնտաժում	մ²	7,700	1,600	12,3200
5	Մ/պլաստե պատուհանների ապամոնտաժում	մ²	7,660	2,200	16,8520
6	Հախճասալի քանդում պատերից	մ²	52,440	0,600	31,4640
7	Խեցեսալե հատակների քանդում	մ²	10,700	0,600	6,4200
8	Շեպերի հախճասալի քանդում	մ²	2,780	0,800	2,2240
9	Կախովի առաստաղների քանդում	մ²	10,000	1,000	10,0000
10	Ասիական թասերի ապամոնտաժում	հատ	2,000	0,800	1,6000
11	Ասիական թասի բետոնե բարձիկի քանդում	մ³	0,486	20,000	9,7200
12	Լվացարանի ապամոնտաժում	հատ	2,000	0,700	1,4000
13	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5 կմ	տն	13,454835	1,400	18,8368
	Ընդամենը տվյալ բաժնով՝				**256,0918**
	Ընդամենը տվյալ բաժինը՝ արտահայտված տոկոսներով				**0,884**
	Հիմնանորոգման աշխատանքներ				
14	Ամրանավորված բետոնե հարթեցնող շերտ B-15 դասի բետոնից 5սմ հաստությամբ 17մ2	մ³	0,850	57,000	48,4500
15	Ամրանային ցանցի արժեքը 100x100x4մմ	տն	0,034	750,000	25,5000
16	Խճի շերտի պատրաստում 20սմ հաստությամբ 38,1մ2	մ³	7,620	18,000	137,1600
17	Ամրանավորված բետոնե հարթեցնող շերտ B-15 դասի բետոնից 1 0սմ հաստությամբ 38,1 մ2	մ³	7,620	55,000	419,1000
18	Ամրանային ցանցի արժեքը 100x100x4մմ	տն	0,0762	750,000	57,1500
19	Աստիճանի բետոնե շերտ B-15 դասի բետոնից մետառաևան ցանցով	մ²	3,960	2,000	7,9200
20	Ամրանային ցանցի տեղադրում 100x100x4մմ	տն	0,00792	750,000	5,9400
21	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ²	10,700	2,000	21,4000
22	հյոցոսալե հատակի պատրաստում	մ²	10,700	9,200	98,4400
23	Կախովի առաստաղների տեղադրում պլաստմասե շերտաձողերով	մ²	10,000	8,000	80,0000
24	Պատերի լավորակ ց/ավազե սվաղ ցանցով	մ²	52,440	5,500	288,4200
25	Պատերի երեսպատում հախճասալով h=1,8մ	մ²	28,280	11,000	311,0800
26	Պատերի լավորակ գիպսոնիտե սվաղ	մ²	24,160	5,000	120,8000
27	Պատերի լավորակ յուղաներկում համատարած մածկապ ատումով	մ²	24,160	2,000	48,3200
28	Շեպությունների ց/ավազե սվաղ	մ²	4,120	5,200	21,4240
29	Շեպերի երեսպատում հախճասալով	մ2	4,120	11,000	45,3200
30	Շեպությունների ց/ավազե սվաղ	մ2	3,260	5,200	16,9520
31	Շեպությունների գիպսոնիտե սվաղ	մ2	3,260	8,400	27,3840
32	Շեպությունների լավորակ յուղաներկում համատարած	մ2	3,260	2,000	6,5200

33	Պատուհանագոգի ց/ավազե սվաղ	մ2	0,400	5,200	2,0800
34	Պատուհանագոգի երեսպատում հախճասալով	մ2	0,400	9,400	3,7600
35	Արտաքին շեպերի երեսպատում 30մմ հաստությամբ	մ2	6,900	52,000	358,8000
36	Արտաքին պատերի երեսպատում 30մմ հաստությամբ	մ2	9,600	52,000	499,2000
37	Պատերի ց/ավազե սվաղ ցանցով 4սմ հաստությամբ	մ2	171,510	5,000	857,5500
38	Պատերի ց/ավազե սվաղ ցանցով 5սմ հաստությամբ	մ2	19,320	6,000	115,9200
39	Առաստաղի լավորակ ց/ավազե սվաղ ցանցով	մ2	67,320	5,000	336,6000
40	Կախովի առաստաղների տեղադրում պլաստմասե	մ2	42,200	8,000	337,6000
	Ընդամենը տվյալ բաժնով՝				**4298,79**
	Ընդամենը տվյալ բաժինը՝ արտահայտված տոկոսներով				**14,84**
	Դռներ, պատուհաններ				
41	Փոշեներկված, փականով մետաղական վերնափեղկով /վերմափեղկ-0,66մ2/ դռների տեղադրում 1400x2900մմ	$մ^2$	8,120	61,000	495,3200
42	Փոշեներկված, փականով մետաղական դռների տեղադրում 1000x2200մմ 1հատ	$մ^2$	2,200	61,000	134,2000
43	Ա/պլաստե սպիտակ դռների տեղադրում	$մ^2$	5,500	60,000	330,0000
44	Ա/պլաստե սպիտակ պատուհանների տեղադրում բացվող հատված	$մ^2$	3,780	45,000	170,1000
45	Ա/պլաստե սպիտակ պատուհանների տեղադրում չբացվող հատված	$մ^2$	3,780	30,000	113,4000
46	B-15 դասի բետոնից հարթակի պատրաստում ասիական թասերի համար	$մ^3$	0,324	55,000	17,8200
47	Ասիական թասերի տեղադրում	հատ	2,000	30,000	60,0000
48	Լվացարանի տեղադրում սիֆոնով	հատ	2,000	30,000	60,0000
49	Լվացարանի ծորակի տեղադրում	հատ	2,000	7,000	14,0000
50	Ձեռքի չորանոց	հատ	2,000	30,000	60,0000
51	Հայելիների, սանհանգույցի դեկորատիվ մասերի տեղադրում	$Կ^2$	2,000	40,000	80,0000
	Ընդամենը տվյալ բաժնով՝				**1534,84**
	Ընդամենը տվյալ բաժինը՝ արտահայտված տոկոսներով				**5,30**
	Արտաքին պատի մշակում				
52	Թույլ տեսակի ծառերի հանում և տնկում	հատ	4,000	8,500	34,0000
53	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	85,100	2,700	229,7700
54	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	85,100	4,500	382,9500
55	Բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	170,200	3,500	595,7000
56	Պատերի երեսպատի մաքրում լվացում ջրով	$մ^2$	113,400	0,250	28,3500
57	Պատերի ջրամեկուսացում 2 շերտ իզոգամից	$մ^2$	113,400	5,200	589,6800
58	Պատերի լավորակ ց/ավազե սվաղ ցանցով	$մ^2$	113,400	4,600	521,6400
	Ընդամենը տվյալ բաժնով՝				**2382,09**
	Ընդամենը տվյալ բաժինը՝ արտահայտված տոկոսներով				**8,22**
	Էլեկտրական աշխատանքներ				
59	Լուսատուների ապամոնտաժում	հատ	6,000	0,600	3,6000
60	Անջատիչների ապամոնտաժում	հատ	3,000	0,250	0,7500
61	Վարդակների ապամոնտաժում	հատ	2,000	0,270	0,5400
62	Հաղորդալարի ապամոնտաժում	գմ	15,000	0,080	1,2000
63	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում	տն	0,016	2,800	0,0448
64	Ավտոմատ անջատիչ միաբևեռ 25Ա	հատ	1	6,500	6,5000
65	Պահարան դռնակով հաշվիչի տեղադրման համար 16	հատ	1,000	22,000	22,0000
66	ВВГнг-LS 3x4մմ2 մալուխի անցկացում	Գմ	15,000	1,800	27,0000
67	ВВГнг-LS 3x2,5մմ2 մալուխի անցկացում	Գմ	69,000	1,200	82,8000
68	Պոլիվինիքլորիդե այրմանը չնպաստող	Գմ	75,000	0,670	50,2500
69	Անցքերի բացում 500մմ հաստությամբ պատերում,	տեղ	3,000	5,700	17,1000
70	Լուսադիոդային լուսատու 12Վտ,ներկառուցված Ձևը կլոր	հատ	22,000	9,700	213,4000
71	Լուսադիոդային լուսատու 25Վտ ձևը քառակուսի	հատ	6,000	18,500	111,0000
72	Մեկստեղնավոր անջատիչների տեղադրում	հատ	5,000	1,800	9,0000
73	Երկստեղնավոր անջատիչների տեղադրում	հատ	2,000	2,000	4,0000
74	Երկտեղանի վարդակների տեղադրում հողանցման	հատ	3,000	3,000	9,0000
75	Մեկստեղնավոր վարդակների տեղադրում հողանցման	հատ	6,000	2,000	12,0000
76	Տուփ անջատիչների և վարդակների տեղադրմոն համար	հատ	7,000	0,200	1,4000
77	Տուփ ճյուղավորիչ	հատ	3,000	0,130	0,3900

78	Տուփ ճյուղավորիչ արտաքին լուսավորության համար	հատ	7,000	0,130	0,9100
79	Ակոսների փորում պատերում	գմ	23,000	0,700	16,1000
	Ընդամենը տվյալ բաժնով՝				**588,9848**
	Ընդամենը տվյալ բաժինը՝ արտահայտված տոկոսներով				**2,033**
2. ԾԱԾԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					
1	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	3,000	5,500	16,5000
2	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	1,370	1,500	2,0550
3	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	3,0155	3,000	9,0465
4	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-20 դասի	մ³	1,630	75,000	122,2500
5	Ամրանի արժեքը փ16մմ A500c դասի	տն	0,1514	590,000	89,3260
6	Ամրանի արժեքը Փ8մմ A240c դասի	տն	0,0077	600,000	4,6200
7	100x100x4մմ մետաղական խողովակների սյուների պատրաստում և տեղադրում	տն	0,284208	51,000	14,4946
8	100x100x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	24,000	9,000	216,0000
9	60x40x3մմ, 50x40x3մմ մետաղական խողովակներից ֆերմաների պատրաստում և տեղադրում	տն	1,562656	73,000	114,0739
10	60x40x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	241,650	3,100	749,1150
11	50x40x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	136,700	2,900	396,4300
12	40x40x2մմ մետաղական խողովակներից կավառամածի պատրաստում և տեղադրում	տն	0,419135	88,000	36,8839
13	40x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	120,000	2,000	240,0000
14	300x300x10մմ ներդիր թերթապողպատ 6հատ	տն	0,04239	650,000	27,5535
15	300x300x1 0մմ ներդիր թերթապողպատ 13հատ	տն	0,091845	650,000	59,699
16	Ամրանի արժեքը փ12մմS	տն	0,0053	590,000	3,1270
17	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	2,265999	50,000	113,3000
18	Ցինկապատ գունավոր պրոֆիլ թիթեղից ծածկույթի պատրաստում 0,5մմ հաստությամբ Խ/Ա 21, 0,5մմ	մ2	110,400	8,500	938,4000
19	Գագաթնաթիթեղի պատրաստում գունավոր թիթեղից 12գմ 300մմ լայնությամբ	մ2	8,220	1,500	12,3300
20	Գաթաթնաթիթեղի արժեքը գունավոր 150x150մմ	գմ	12,000	4,000	48,0000
	Ընդամենը տվյալ բաժնով՝				**3213,2044**
	Ընդամենը տվյալ բաժինը՝ արտահայտված տոկոսներով				**11,093**
3. Գրասենյակային տարածքի կառուցում					
	Հիմքերի իրականացման աշխատանքներ				
1	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	16,000	2,900	46,4000
2	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	4,000	1,500	6,0000
3	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	22,200	3,000	66,6000
4	Բուտաբետոնե հիմքերի պատրաստում B-12,5 դասի	մ³	12,000	45,000	540,0000
5	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-22,5 դասի բետոնից	մ³	6,000	110,000	660,0000
6	Ամրանի արժեքը փ18մմ A500c դասի	տն	0,392	590,000	231,2800
7	Ամրանի արժեքը Փ8մմ A240c դասի	տն	0,160	620,000	99,2000
8	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում 1 0սմ հաստությամբ 48,2մ2	մ³	4,820	17,000	81,9400
9	Ամրանավորված բետոնե հարթեցնող շերտ B-15 դասի բետոնից 15սմ հաստությամբ 48,2մ2	մ³	7,230	55,000	397,6500
10	Ամրանային ցանցի արժեքը 100x100x4մմ	տն	0,0964	750,000	72,3000
11	Հատակի ց/ավազե հարթեցնող շերտ մետաղական ցանցով 1 0սմ հաստությամբ 48,2մ2	մ³	4,820	45,000	216,9000

12	Ամրանային ցանցի արժեքը 100x100x4մմ	տն	0,0964	750,000	72,3000
13	Արտաքին պատերի շարվածք կ/ձևի տուֆ քարից 40սմ հաստությամբ ամրանավորված 26,2մ2	մ3	10,480	27,000	282,9600
14	Շարվածքի ամրանավորում ամրանային ցանցով	տն	0,02096	800,000	16,7680
15	Պատերի լավորակ ց/ավազե սվաղ ցանցով	մ²	20,700	4,600	95,2200
16	Պատերի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով,	մ²	20,700	50,000	1035,0000
17	B-12,5 դասի բետոնով բուտաբետոնե թեքահարթակի աատոաստում	մ³	4,120	55,000	226,6000
18	Մուտքային հանգույցի լավորակ ց/ավազե սվաղ	մ²	22,490	1,800	40,4820
19	Հարթակների երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով	մ²	15,600	17,000	265,2000
20	Պատերի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով,	մ²	6,890	50,000	344,5000
21	Մուտքային հանգույցի աստիճանների ց/ավազե սվաղ	մ²	3,550	2,500	8,8750
22	Աստիճանների և աստիճանատակերի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով	մ²	3,550	30,000	106,500
23	Խճի շերտի պատրաստում 1 0սմ հաստությամբ 63,1 մ2	մ³	6,310	17,000	107,270
24	Ամրանավորված բետոնե հարթեցնող շերտ B-15 դասի բետոնից 1 0սմ հաստությամբ 63,1 մ2	մ³	6,310	55,000	347,050
25	Ամրանային ցանցի արժեքը 100x100x4մմ	տն	0,1262	750,000	94,650
26	60x40x3i5J, 30x30x2Ji5 մետաղական խողովակներից [illegible]	տն	0,095015	100,000	9,5015
27	6(^4(^3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	11,090	3,800	42,1420
28	3(^3(^2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	27,840	1,800	50,1120
29	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0,095015	50,000	4,7508
30	4(^3մմ, 5(^3(^3մմ մետաղական խողովակներից [illegible]	տն	0,102872	100,000	10,2872
31	4(^3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	19,200	2,500	48,00
32	5(^3(^3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	9,900	3,500	34,65
33	Ձգան A18 8,5գմ	տն	0,017	750,000	12,75
34	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0,102872	50,000	5,1436
	Ընդամենը տվյալ բաժնով՝				**5678,982**
	Ընդամենը տվյալ բաժինը՝ արտահայտված տոկոսներով				**19,61**
35*	Մոդուլային տիպի ադմինիստրատիվ շինության իրականացում	մ2	48,300	228,000	11012,40
	Ընդամենը տվյալ բաժնով՝				**11012,4**
	Ընդամենը տվյալ բաժինը՝ արտահայտված տոկոսներով				**38,02**
	ԱՄԲՈՂՋԸ՝ ներառյալ 20% ԱԱՀ				**28965,383**
	ԱՄԲՈՂՋԸ՝ արտահայտված տոկոսներով				***100***

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Ջերմուկ, Երևանյան խճ. 1 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900362052012
ՀԿՀՀ 08913735
համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՀՈՎՀԱՆ» ՍՊԸ
ք.Ջերմուկ Շահումյան 11ա
«Կոոպինբանկ» ՓԲԸ
ՀՀ 247800056191001 0
ՀԿՀՀ 08909995
Տնօրեն՝ Ա.Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«02» սեպտեմբերի 2021թ. կնքված
N ՋՀ-ՃՇՀ-ԳՀԱՇՁԲ-21/8 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՃՈՊԱՆՈՒՂՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ,ՆՈՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N Ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքներ	Աշխատանքների կատարման ժամկետը**
1	***Ջերմուկ քաղաքի ճոպանուղու շինությունների հիմնանորոգման,նորերի կառուցման աշխատանքներ***	
ԸՆԴԱՄԵՆԸ		**Համապատասխան տեխնիկական հսկողության ծառայության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 01.11.2021թ.**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362052012
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՀՈՎԶԱՎ» ՍՊԸ
ք.Ջերմուկ.Շահումյան 11ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2478000561910010
ՀՎՀՀ 08909995
Տնօրեն՝ Ա.Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«02» սեպտեմբերի 2021թ. կնքված
N ՋՀ-ՃՇՀ-ԳՀԱՇՁԲ-21/8 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611300/1	***Ջերմուկ քաղաքի ճոպանուղու շինությունների հիմնանորոգման,նորերի կառուցման աշխատանքներ***								... %	14482691.5		14482691.5		28965383

Պետության կողմից վճարվելիք մասնաբաժինը՝50%,կվճարվի աշխատանքները ամբողջ ծավալով ընդունվելուց հետո,համաձայն կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման դրույթների:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362052012
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՀՈՎԶԱՎ» ՍՊԸ
ք.Ջերմուկ.Շահումյան 11ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2478000561910010
ՀՎՀՀ 08909995
Տնօրեն՝ Ա.Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ